



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅ
ԲԱՐՁՐԱՀԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ



«06» 07 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆԱԿԱՆ

ԲՓ 63

Զեռնարկողը՝

«ԱՎԱՀՊԼՅՈՒ» ՍՊԸ

Ք. Երևան, Եկմայլան 6

Գործունեությունը՝

Տանձութիւն ավազակոպճային խառնուրդի հանքավայրի
Տանձութ-1 գեղամասի արդյունահանման շրջակա
միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Արմավիրի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն՝

Վ. Սահակյան



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՍԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԾՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՍՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 63

«06» 07 2018թ.

**Արմավիրի մարզի Տանձուտի ավագակոպճային խառնուրդի հանքավայրի
Տանձուտ-1 տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվետվություն**

Պատվիրատու՝	«ՀԱՎԱԶՊԼՅՈՒՄ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	«Ա»
Տեղադրման վայրը՝	Արմավիրի մարզ, Տանձուտ համայնք

Տանձուտի ավագակոպճային խառնուրդի երևակման Տանձուտ-1 տեղամասը գտնվում է Արմավիրի մարզի Տանձուտի համայնքի տարածքում, Արաքս գետի հին հունում, Արգավանդ գյուղից 3.0կմ դեպի հյուսիս-արևելք, Տանձուտից 3.6կմ դեպի հյուսիս-արևելք և Արևիկ գյուղից 2.5կմ դեպի հարավ-հարավ-արևելք:

Տեղամասը գբաղեցնում է շուրջ 4.0հա տարածք և գտնվում է 847.5-848.6մ բացարձակ բարձրությունների վրա:

Հանքավայրի պաշարները 2015 թվականի ապրիլի 1-ի դրությամբ, Յ կարգով 290.0հազ.մ³ քանակով հաստատվել են ՀՀ Եներգետիկ Ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի պետական ընդերքաբանական փորձաքննության 2015 թվականի օգոստոսի 18-ի թիվ 7 Եզրակացությամբ:

Հանքավայրի հաստատված պաշարները թույլատրվել են օգտագործել կոպճի (ՀՍ ԳՈՍ 8267-95), ինչպես նաև շինարարական ավագի (ՀՍ ԳՈՍ 8736-95) արտադրության համար:

Տեղամասում օգտակար հաստվածքը ներկայացված է ավագակոպճային խառնուրդի մերձհորիզոնական տեղադրմամբ 3.7-9.25մ հզորությամբ շերտածն մարմնով: Այն ծածկված է 0.25-0.4մ հզորության կավավագային շերտով, որը վերագրված է մակաբացման ապարներին:

Լեռնային փորվածքների անցման ընթացքում կատարված դիտարկումները ցույց են տալիս, որ օգտակար հաստվածքը հիմնականում ջրագուրկ է, սակայն ջրերի կապիլյար բարձրացման հետևանքով Արաքս գետի հնահունամերձ հետախուզահորերում ավագակոպիծները, նույնիսկ տարվա ամենաչոր ժամանակ (օգոստոսին) գտնվում են խոնավ վիճակում:

Տեղամասի հարավային մասով անցնում է դրեմաժային առու, որը շահագործման ժամանակ կօգտագործվի տեղամասից գրունտային ջրերի հեռացման համար: Թանի որ տեղամասի ապարները լավ ջրաթափանց են, ապա տեղամասում բաց եղանակով շահագործման դեպքում նույնիսկ գերնորմատիվ տեղումները խոչընդունելու չեն առաջացնի,



Դրանք կներծծվեն ջրաթափանց ավազակոպիճներով, բեռնաթափվելով Արաքս գետի հնահունային ստորիմ մասերում:

Այնուամենայինիվ, չի բացառվում, որ հատկապես գարնանային հորդառատ տեղումների համենատարար կարծ ժամանակահատվածում օգտակար կուտակի ստորին հորիզոնները հայտնվեն ջրակալված վիճակում և շահագործման շաշխատանքներն իրականացվեն մասմաք ջրային միջավայրում:

Տեղամասի տարածքում օգտակար հանածոյի մերձակերեսային շերտաձև տեղադրություն մակարացման ապարների ոչ մեծ հզորությունը, ինչպես նաև հետախուզված տեղամասի բարենպաստ լեռնաերկրաբանական և լեռնատեխնիկական պայմանները (ռելիէֆը գործնականում հարթ է, ավազակուտակը փոքր հզորությամբ մերձհորիզոնական տեղադրմամբ մարմին է և այլն), թույլ են տալիս ավազակոպիճների արդյունահանումն իրականացնել բաց եղանակով, առանց ապարների նախնական փխրեցման, անմիջապես դրագլայնով՝ հանույթային մեկ աստիճանով խրամուղու անցումով, կամ հակադարձ շերեփով էքսկավատորի միջոցով:

Այն զերծ կպահի բացահանքը ջրողողումից, նույնիսկ գերնորմատիվ տեղումների դեպքում: Անձրևաջրերը կներծծվեն ու կանցնեն ջրաթափանց ավազակոպիճներով, բեռնաթափելով Արաքս գետի հնահունային մասում:

Տեղամասում արդյունահանումը կատարվելու է կուտակի ողջ հզորությամբ, դրա ստորին մասում թողնելով մինչև 10սմ հզորությամբ շերտ:

Հանքավայրի լեռնատեխնիկական բարենպաստ պայմանները հնարավորություն են տալիս հանքավայրը մշակել բաց լեռնային աշխատանքներով:

Տանձուտի ավագակոպճային հանքավայրի Տանձուտ-1 տեղամասի բացահանքի տարածքի սահմաններում հանքարդյունահանման աշխատանքները կատարելու համար նախագծված բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը.

- ամենամեծ երկարությունը – 310մ;
 - ամենամեծ լայնությունը – 207մ;
 - մշակման ամենամեծ խորությունը – 9.3մ;
 - օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարները՝ 290.0հազ.մ³,
 - օգտակար հանածոյի կողմանու պաշարները՝ 254.25հազ.մ³

Եզրակացնելու համարույթը կունքու պաշատը՝ ըստ Ա. Շահնազար Բաղադրիչի հիմնական տեխնոլոգիական սպորավորմբները են

- Էքսկավատոր – Э-2505 դրագլայն
 - բուլդոզեր - ДЗ-130
 - ավտոբեռնիշպահ - КрАЗ-256Б

Բացահանքում խմելու ջրով բանվորներին ապահովում են անհատական տափաշչերի: Տեխնիկական ջուր պահանջվում է բացահանքի սահմաններից դուրս ավտոճանապարհների ջրման համար: Ավտոճանապարհների ջրումը կատարվում է KO-002 ջրան լվացող լակորներենսով:

Օգտակար հաստաշերտի արդյունահանման ժամանակ նախազժային կորուստները բռնվագիր են ուսուցչի համրենիք:

1. Ընդհանուր բացահանքային կորուստներ՝ դրանք այն կորուստներն են, որոնք մնում են բացահանքի կողերի շեպերի բնամասերում: Այդ կորուստները հաշվարկված են 30950 մ³ կամ 10.67%:
 2. Շահագործողական կորուստներ՝ դրանք այն կորուստներն են, որոնք պայմանավորված են.
 - օգտակար հաստաշերտի տանիքը բուլղոգերով մակարացման ապարների ծածկույթից մաքրելու ժամանակ մոտ 5սմ տեղի ունեցող կորուստներով, որը կազմում է 1700մ³- 0.59%;
 - օգտակար հանածոն հիմնատակող կավային ապարների աղտոտումից գերծ պահելու համար բացահանքի հատակում մոտ 10սմ օգտակար հանածոյի շերտ թողնելու հետ, այդ կոռուստներով կազմում են մոտ 3100մ³ կամ 1.07%:

Ըստ կորուստների զագության առաջ օրու զամ 1.57%:
Ընդհամենը կորուստները կազմում են 35 750մ³ կամ 12.33%:

Քանի որ, օգտակար հաստաշերտը ունի համարյա հորիզոնական տեղադրում և կայուն հզորություն, հանքաշերտի բացումը կատարվում է բացահանքային դաշտի հարավ-արևելյան մասից (ամենացածր նիշը) ընդերկայնական կտրող խրամի անցումով:

Կտրող խրամի լայնությունը հիմքի մասում ընդունված է 2.0մ, միջին խորությունը՝ 8.8մ: Կողի թեքման անկյունը ընդունված է հարավային կողից (ոչ աշխատանքային) 30° , աշխատանքային կողից 40° : Կտրող խրամի երկարությունը կազմում է 12.0մ:

Կտրող խրամի անցումը կատարվում է 1.5մ³ շերեփի տարողությամբ դրագլայնով սարքավորված ԹՕ-2505 մակնիշի էքսկավատորով:

Բացահանքային դաշտի տարածքում մակաբացման ապարների հզորությունը շատ փոքր է. միջինը՝ 0.33մ, տարածքը ծածկված է աղքատ բուսականությամբ: Մակաբացման ապարների ծավալը՝ 11070մ³:

Տարածքը ծածկող՝ ժամանակակից դելյուվիալ ավազակավային առաջացումները աստիճանաբար Ծ3-130 մակնիշի բուլղողերով կտրվում, կուտակվում է և տեղափոխվում N1 ժամանակավոր լցակույտ: Որից հետո աշխատանքային ճակատը 20մ առաջ շարժվելուց հետո, երբ ստեղծվում է մշակված տարածք (արդյունահանված տարածք) կուտակված ժամանակական դելյուվիալ ավազակոճային առաջացումները բուլղողերով տեղադրվում են բացահանքի հատակում (շահագործման 6-րդ տարվանից սկսած): Այնուհետև շահագործմանը զուգընթաց իրականացվում է ներքին լցակույտառաջացում:

Նախագծով ընդունված բուլղոգերը և էքսկավատորը կարելի է օգտագործել ներքին լցակույտառաջացման ժամանակ:

Հանքավայրի շահագործման ժամանակ ընդունված է ընդլայնական ընթացքաշերտերով միակողանի մշակման համակարգ:

Ընդունված մշակման համակարգը ունի հետևյալ տարրերը՝

- աստիճանի բարձրությունը միջինը՝ 8.8մ;
 - աստիճանի թեքության անկյունը՝
աշխատանքային – 40° ;
ոչ աշխատանքային (նարված) – 30° ;
 - ընթացքաշերտի լայնությունը – 8.5մ;
 - էքսկավատորի աշխատանքի անվտանգ գոտու շառավիղը – 18.0մ;
 - Աշխատանքային հրապարակի լայնությունը – 30.0մ:

Ավագակոպճային խառնուրդի արդյունահանման աշխատանքները կատարվում է դեպի ներքև շերեփման եղանակով, 1.5մ³ շերեփի տարողությամբ, դրագլայնով սարքավորված Թ-2505 մակնիշի էքսկավատորով: Նախ կատարվում է օգտակար հանածոյի արդյունահանում և կուտակում օգտակար հաստաշերտի մակերևույթին (առաստարին)՝ օգտակար հանածոյի ջրագրկման նպատակով, որից հետո իրականացվելու է ջրագրկված օգտակար հանածոյի կույտի բարձումը սպառողների տրանսպորտային միջոցների մեջ:

Ավագակոպճային խառնուրդի տեղափոխումը մինչև 3.0կմ միջին հեռավորության վրա գտնվող ԶՏԿ ջարդման և տեսակավորման կայան կատարվում է ԿրԱ3-256Բ ավտոինքնաթափի միջոցով:

Լեռնային աշխատանքների կազմակերպման և ավագակոպճային խառնուրդի արդյունահանումն իրազործելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ աշխատանքներ՝

1. Մոտեցող բնահողային ավտոճանապարհի կարգաբերում (Լ-290Ծ) -2400մ²,
 2. Մակարացման ապարների հեռացում բացահանքի մակերևույթից – 650մ³,
 3. Դրենժային (ցանաքեցման) առվի կառուցում բացահանքի հարավ-արևելյան մասից - 27մ (3100մ³),
 4. Գոյություն ունեցող ջրհեռացման առվի հանքավայրի հարավ- արևմտյան հատվածի տեղափոխում հանքավայրի սահմաններից դուրս՝ 7600 մ³:
 5. Արյունաքերական հրապարակի կարգաբերում- 220մ²:
 6. Օգտակար հաստաշերտի մակերևույթին տրամադրութային սարքավորումների և էքսկավատորի շարժման ուղեծրով ՊԲՀ-32 մակնիշի փոխադրովոր երկարթունե տիպային սալիկների տեղադրում



Բացահանքի ջրամատակարարումը կատարվում է արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, մոտեցող ավտոճանապարհը ջրելու համար տեխնիկական ջրով մատակարարելու համար:

Խմելու ջուրը բերվում է ԱԲ-1.2 մակնիշի կցովի ջոի ցիստեռնով: Տեխնիկական ջուրը բերվում է ԿՕ-002 մակնիշի ջոցան ավտոմեքենա 5տ ջոի տարողությամբ, որը այդ ջուրը ցնցուղում

է 2 երթով:

Հանքավայրի շահագործման տևողությունը կազմում է մոտ 25 տարի:

Իր գործունեության ընթացքում ընկերությունն իր ներդրումներն է ունենալու ազդակիր համայնքի սոցիալ-տնտեսական կյանքում:

Հանքավայրի մոտակայքում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Բացահանքի տարածքում ՀՀ Կարմիր գոքում գրանցված բուսական և կենդանական տեսակներ չեն արձանագրվել:

Տանձուտ ավագակոպճային խառնուրդի հանքավայրի Տանձուտ 1 տեղամասի շրջանում պատմության և մշակույթի հուշարձաններ գրանցված չեն:

Տանձուտի ավագակոպճային խառնուրդի հանքավայրի Տանձուտ 1 տեղամասի տարածքը գյուղատնտեսական նպատակների համար անօգտագործելի է, ներկայացված է գետային ավագակոպճային, կավաավագային բերվածքներով: Յոդի վերին՝ բերրի շերտը հանքավայրի տարածքում բացակայում է:

Բացահանքի տարածքում լեռնատեխնիկական ռեկուլտիվացման աշխատանքներն իրականացվելու են արդյունահանման աշխատանքների ավարտից հետո: Բացահանքի լեռնատեխնիկական վերականգնումները իրականացվելու են բացահանքում արդյունահանման աշխատանքների լրիվ ավարտումից հետո: Ներքին լցակույտում մակարացման ապարների մնացած 1180մ³ ծավալը, բուլղողերի օգնությամբ տեղափոխվում են մշակված տարածք և փուլում 0.4մ բարձրությամբ և հարթեցվում:

Վերականգնվում է արտադրական հրապարակը, ավտոճանապարհը, հանքավայրի հատակը: Վերականգնվող մակերեսը կազմում է համապատասխանաբար՝ 280մ², 300մ² և 28400մ²: Հարթեցվող մակերեսը 28980մ²: Միասին վերականգնման մակերեսը կազմում է 2.9հա:

Ուկուլտիվացման համար օգտագործվելու են ժամանակավոր լցակույտում տեղադրվող մակարացման ապարները: Ուկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար նախատեսվող գումարը կազմում է 647,5հազ. դրամ:

Նախատեսվող աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրը աղտոտվածությունից գերծ պահելու նպատակով նախատեսվում է կիրառել բնապահպանական հետևյալ միջոցառումները.

- Նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որին տրվում է համապատասխան բերություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը:
- Օգտագործված յուղերի ու քայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուժիկացման կամ երկրորդական վերամշակման համար:
- Պարբերաբար հսկել մթնոլորտային օդի մաքրությունը բացահանքում, ավտոճանապարհների վրա:
- Փոշեգրկման նպատակով ժամապարհներին կատարել ջոցանում տարվա չոր և չոր օրերին:
- Մեքենաների աշխատանքի ժամանակ նախատեսվում է վճարակար նյութերի արտանետումների քանակը փոքրացնելու համար սարքավորումների վրա վտանգավոր նյութերի չեզոքացուցիչների տեղադրում: Ինչպես նաև հետևել որպեսզի մեխանիզմի աշխատանքի ժամանակ վառելիքի և քայուղերի արտահոսք տեղի չըւնենա:
- Օգտագործվող ագրեգատները աշխատեցնել սարքին վիճակում վճարակար գազերի գերնորմատիվային արտանետումները բացառելու համար:
- Հանձաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնում որպես մետաղական ջարդոն:

• Արդյունահանված տարածքները ճահճացումից պաշտպանելու համար կկառուցվեն խրամուղիներ, ջրի մշտական հոսք ապահովելու համար:

- Արտաթրվող թունավոր արտանետումների չեզոքացուցիչ սարքերի տեղադրում:
- Խախտված տարածքի ռեկուլտիվացիա:

Տեղամասի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ տարին երկու անգամ հաճախականությամբ

2. Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահատել 100հազ. դրամ:

Առկա է <<Արտադրական վտանգավոր օբյեկտների նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության>> դրական փորձաքննությունը:

Զրային ավագանի կեղտոտում տեղի չի ունենա, քանի որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

ԵԶՐԱՆԳՈՒՄ

Այսպիսով հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Արմավիրի մարզի Տանձուտ համայնքում իրակնացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են ՀՀ բնապահպահանության նախարարության ստորաբաժանումները:

Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործումներության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:

2. Քանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների (ջրերի որակի, քանակի, վիճակի, օդ, հող և այլն) և շահագործման ռեժիմի մոնիթորինգ, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագոգիր մարմիններին և հասարակայնությանը: Անհրաժեշտության դեպքում նախատեսել շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված լրացնուցիչ միջոցառումներ:

3. Առաջացած շինաղիքի (կենցաղային աղբի) հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<ԱՎԱԶՊԼՅՈՒՄ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արմավիրի մարզի Տանձուտի ավագակուպճային խառնուրդի հանքավայրի Տանձուտ-1 տեղամասի արդյունահանման գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացնություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարուանդիր կատարման պայմանով:

Մասնագետ՝



Զ. Զուռնաչյան